

վկայէ որ Կովկաս Շիրվան ու Արան (Երեւան-Ղարաբաղ) կ'արտադրեն «Քաստիան, կտակեղէն, բազմաթիւ գորգեր, եւ քիչ մը մետաքս, որոնք Սեւ Ծով եւ շրջակայ քաղաքները կ'արտածեն»⁽³¹⁾ :

Տիմիթրիուս Գէնթէմիը արձագանգ կ'ըլլայ խիստ հետաքրքրական ծանօթութեան մը այլուստ անձանօթ : Յօսելով Սէլիմ Ա. ի Օսմանեան կայսեր (1512-1520) մասին կը ծանօթագրէ : «Իր հօր (Պայպղիտ Բ.) ժամանակէն ի վեր, Պարսկաստանի սահմանակից գաւառները տարեկան իրր հարկ Պարսիկներուն կու տային որոշ թիւ մը ՉՈՒԼ կոչուած գորգերու»⁽³²⁾ : Բնական է Պարսկաստանի սահմանակից Օսմանեան կայսրութեան այն ստեղծուած գաւառները Հայաստանի մասերն էին, բնակչութեան մեծ մասը հայերէ կը բաղկանար, իսկ երկրին արտադրող տարրերը դարձեալ հայեր էին, ուրեմն տրուած ՉՈՒԼ գորգերն ալ Հայկական արտադրութիւն պէտք էր ըլլար : ՉՈՒԼ հաւանաբար Պարսիկ ձիթիւն է, որուն թուրքերէնը կ'ըլլայ ՉՈՒԼ, որ ըստ Գէորգ դպրի կը նշանակէ «ԳՈՒՐՉ՝ գոր արկանեն ի վերայ ձիոց, եւ այլոց ոմանց կենդանեաց, որ եւ ստի ձիթիւնի» : ՉՈՒԼ որ թուրքերէն կը նշանակէ «ցնցոտի լաթ, քուրջ» հաւանաբար ըլլայ Հայաստանի համբաւուոր «այծի մաղէ ցփսին» : Գէնթէմիը կ'աւելցնէ որ Սէլիմ Ա. իր հայրը «չուլճի պապասը» կը կոչէր եւ Սէլիմ դադրեցուց ստոր վաճառումը Պարսից :

1603ին Անդլիացի ուղեգիր ձան Գարթրայթ կը վկայէ որ «Ձուդայի մէջ մենք ութը օր մնացինք, եւ դարձեալ անցանք Արաքս գետը, թողլով Հայաստանի պղնձեական թաղաւորութիւնը՝ որ այժմ թուրքոմանիա կը կոչուի, թուրքոման անունով ժողովուրդի մը պատճառաւ, որ (նախապէս ըսածիս համաձայն) եկաւ Սկիւթացոց աշխարհէն, որոնք կ'ապրին իրր խաշնարածներ իրենց վրաններուն տակ, բայց բնիկ ժողովուրդը (Հայերը) նուիրուած է մշակութեան, եւ տարրեր զլիսուոր արհեստներու, գորգերու եւ ցփսիի արտադրութեանց»⁽³³⁾ :

Անտարակոյս, բնիկ հայկական արտադրութիւններ էին այն իրերը, որոնք Գաւիթ Գ. Վաղարշապատեցիին աթոռակից Մելքիսեդէկը, Չաքարիա վարդապետին ձեռքով Հոսմ Պօղոս Ե Պապին զբրկեց : Չաքարիա Պապէն ընդունուելով անոր մատոյց «նամակ եւ երկու սօֆ եւ խայի մի եւ փիլոն կոճակ խաշածեւ յիսուն արմաստով»⁽³⁴⁾ :

1640-50 թուականներուն էվլիա էֆէնտի՝ թուրք աշխարհագիրը Բաբերդ հանդիպելուն՝ այդ քաղաքին մասին կը գրէ : «արտադրութիւններէն նշանաւոր են նաեւ Պայպուրթի գորգերը եւ բրդեղէնները, թեթեւ, լաւ ներկուած, ճօխ գորգեր, որոնք կ'արտածուին ամէն եր-

(31) J. Barbaro, p. 86.

(32) Demetrius Cantemir. — The History of the Othoman Empire, London, 1734, p. 143.

(33) Purchas His Pilgrimes, 1905, Vol. 8, p. 498.

(34) Սիմէոն Դպիր Լեհացոյ ուղեգրութիւնը : — «Հանդ. Ամս.», 1933, էջ 481 :